ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

I

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԳՏԱԾՈՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-66

Դիանա Միրիջանյան, *պ. գ. թ.*
ՀԱԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՐԵ ՏԱՊԱՆՆԵՐԸ

Քարե տապանները Հայաստանի միջնադարյան թաղման կառույցների տեսակներից են, որոնք լայնորեն տարածված էին հատկապես վաղ միջնադարում, իսկ հետագա դարերում հազվադեպ են[1]: Դրանց մասին մասնագիտական գրականության մեջ համապարփակ ուսումնասիրություններ չկան, ուստի ներկա հոդվածը միտված է այդ բացը լրացնելուն:

Թ. Թորամանյանը, նկատելով թաղման այդ կառույցները, առաջինն էր, որ իր դիտարկումների հիման վրա փորձ է արել տիպաբանել դրանք՝ միաժամանակ անդրադառնալով բնակչության կողմից քարե տապանների երկրորդային օգտագործման հարցին[2]:

Ներկա հոդվածում փորձ է արվում տարբեր հուշարձանների պեղումներով և պատահականորեն հայտնաբերված քարե տապանների դիտարկմամբ տալ դրանց տիպաբանությունը և ժամանակագրությունը:

Հիմնաբառեր՝ թաղման կառույց, սարկոֆագ, տիպաբանություն, թվագրություն, վիմագրություն, մասունք:

Ուրարտական և անտիկ շրջանի քարե տապանները

Սարկոֆագները հայտնի են դեռևս ուրարտական շրջանից, մասնավորապես Արգիշտիխինիլիից և Ալթին-թեփեից, և թվագրվում են մ.թ.ա. 8-րդ դ.[3]: Դրանք պատրաստվել են տեղական սև կամ կարմիր տուֆից և ծածկվել մեկից երեք սալաքարերով: Ուրարտական շրջանում սարկոֆագները լինում են ինչպես երկար, ուղղանկյունաձև, այնպես և սնդուկանման[4]: Արգիշտիխինիլիից 1973 թ. հայտնաբերված սարկոֆագը հատակին ունի 3–4 սմ տրամագծով միջանցիկ մի անցք[5], որի մասին կխոսենք ստորև:

Հետուրարտական շրջանից 4 սարկոֆագներ հայտնի են Գեղադիրից, որոնք թվագրվում են մ.թ.ա. 5–3-րդ դդ.: Դրանք պատրաստված են սև և կարմիր տուֆից և ծածկված մեկ ամբողջական տուֆե սալով: Սարկոֆագներում հայտնաբերվել են փոքրաթիվ, բայց ուշագրավ գտածոներ[6]: Անտիկ շրջանի

---

1 Քարե տապան տերմինը հստակ բնորոշում է թաղման կառույցի այդ տեսակը: Հայերենի արմատական բառարանում քարե տապանը բնորոշվում է որպես ‹‹արկղ, արկղի նման՝ չորս կողմը փակ նաւ (Նոյի), մեռելի մնտուկ, գերեզման, դամբան›› [Աճառեան 1926, 373]:

2 Թորամանյան 1942, 26–27:

3 Есаян и др. 1991, 23.

4 Tiratsyan 2014, 144.

5 Մարտիրոսյան, Թորոսյան 1986, 221–222:

6 Խաչատրյան 1966, 83–93:

սարկոֆագներ հայտնի են Վարդբաղից, Կարմրաքարից, Բենիամինից[7]։Դրանք արտաքին և ներքին լավ մշակում ունեցող ուղղանկյունաձև արկղեր են և թվագրվում են մ.թ. 3–4-րդ դդ.։ Ուշագրավ է, որ ծածկասալերի վրա ևս անցքեր (անցքերի տրամագիծը՝ արտաքուստ 6–8 սմ, ներսից՝ 5–10 սմ) կան։ Այս հանգամանքը, ինչպես նաև որոշակի իրերի առկայությունը թաղման կառույցներում, թույլ են տալիս սարկոֆագները չհամարել քրիստոնեական։ Գուսանագյուղից (Շիրակի մարզ) ևս հայտնաբերվել են բազմաթիվ քարե տապաններ, որոնք ծածկված են եղել միակտոր սալերով, որոնց թվագրությունը թեև հստակ չէ, սակայն Թորամանյանը դրանք համարում է նախաքրիստոնեական[8]։

Վաղմիջնադարյան քարե տապանները

Մշո Ս.Կարապետ վանքի վանահայր, 4-րդ դ. պատմիչ Ձենոբ Գլակն ուշագրավ վկայություն ունի սարկոֆագում Ս. Կարապետի և Աթանագինեսի մնացյալ նշխարներն ամփոփելու վերաբերյալ. «Նույն ձևով էլ կարգավորեցինք նշխարների հանգստարանը, դրեցինք մի մարդահասակ քարե տապանում. իսկ երկու վկաներինը դրեցինք եկեղեցու աջակողմյան դռան մոտ»[9]։

Ընդհանուր ծավալների մշակումներով բոլոր սարկոֆագները գրեթե միանման են։ Սակայն կառուցվածքային մանրամասն դիտարկումները թույլ են տալիս դրանք բաժանել մի քանի տիպերի.

1. Ուղղանկյունաձև՝ ներքուստ մշակված, արտաքուստ անմշակ։ Հավանաբար այս տեսակի քարե դագաղի մասին է խոսում նաև Թ. Թորամանյանն իր նկարագրություններում. «*Իմ տեսած տապաններուն մեջ մեկ տեսակ մը կար, որ պարզ երկար քառակուսի սնտուկ է, բոլորովին պարզ և արտաքուստ հազիվ կոկված, ինչ որ ապացույց է թե հողին մեջ պետք է թաղվեր, ոչ թե հողեն դուրս երևնար*»[10]։ Նմանօրինակ երկու քարե դագաղներ հայտնի են նաև Լմբատավանքից, որոնք գտնվում են եկեղեցու հյուսիսարևելյան հատվածում [նկ. 1]։

2. Ուղղանկյունաձև՝ ներքուստ և արտաքուստ կանոնավոր մշակված։ Այս տեսակը ամենատարածվածն է և հաճախ է հանդիպում տարբեր հնավայրերի պեղումների ժամանակ։ Մասնավորապես մեզ հայտնի է Աղցքից [նկ. 2][11], Գառնիից[12], Երերույքից[13], Ձրվեժից [նկ. 3], Վանաձորից [նկ. 4], Գոգարանից[14], Գետարգելի եկեղեցուց [նկ. 5], Էջմիածին քաղաքի մշակույթի տան մոտ բացված բազիլիկ եկեղեցու շրջակայքից[15]։ Ուշագրավ օրինակ է Ձրվեժում Ն.Տոկարսկու պեղած դամբարանասրահի սարկոֆագը, որն ունի ոչ կանոնա-

7 Եգանյան 2010, 50–52:

8 Թորամանյան 1942, 26–27:

9 Մամիկոնյան 1989, 48–49:

10 Թորամանյան 1948, 55:

11 Սիմոնյան և այլք 2017–2018, 27:

12 Хачатрян 1976, 19–20:

13 Տոնապետյան 2020, 123:

14 Kalantaryan et al. 2015, 41–42.

15 Կարախանյան և այլք 1992, 159–160:

վոր ուղղանկյան տեսք (218×125×63×7–14 սմ, բարձրությունը՝ 63 սմ): Կարմրավուն տուֆից այս հսկա սարկոֆագը դամբարան է մտցվել կառուցման ընթացքում՝ վերևից, կամ արևմտյան կողմի անավարտ մուտքից և դամբարանասրահում հպված է հյուսիսարևելյան անկյանը[16]: Սարկոֆագային թաղումներով մի ամբողջ դամբանադաշտ գտնվում է նաև Արցախում՝ Գյավուրկալա կոչվող բնակավայրի մոտ[17]:

3. Ուղղանկյունաձև՝ կլորացող եզրերով: Նման օրինակներ կան Ձրվեժում[18]:

4. Ուղղանկյունաձև՝ մի կողմում լայն, ոտքերի հատվածում նեղ: Նման սարկոֆագներ կան Լոռու մարզի Կուրթան գյուղի թանգարանի բակում[19] (նկ. 6), Ապարանի բազիլիկի շրջակայքում [նկ. 7]: Վերջինիս պեղումների ժամանակ՝ աբսիդի հարավարևելյան անկյունում բացվել է սարկոֆագներով թաղումների մի ամբողջ շարք, որոնց մանրամասն նկարագրություն, ցավոք, չկա[20]:

5. Արտաքինից ուղղանկյունաձև, ներքուստ՝ մարդու մարմնի ձևով մշակված: Ունի երկու տարատեսակ.

ա. Փորված է այնպես, որ գլխի համար առանձին շրջանաձև փորվածք ունի: Գլխից հետո փորված է ուսերի լայնության հատվածը, որն այս տարատեսակում խիստ ուղիղ գծերով է արված: Այնուհետև աստիճանաբար նեղանում է և ստանում մարդու մարմնի ձև: Օրինակները հանդիպում են Լմբատավանքում[21], Արուճում[22]:

բ. Այս տարատեսակը նախորդից տարբերվում է միայն ուսերի հատվածով, որտեղ գլխից անցումը իրականացված է շրջանաձև. սրա լավագույն օրինակը Ս. Հռիփսիմե եկեղեցու արևելյան հատվածում գտնվող սարկոֆագն է [նկ. 8]:

Միջնադարյան սարկոֆագները հիմնականում ծածկվել են մեկ ընդհանուր սալից մինչև երեք-չորս մասից բաղկացած ծածկասալերով[23], կամ երկլանջ կափարիչներով[24], որոնք մնում էին հողի մեջ կամ հողի մակերեսին:

Քարե տապանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց ներքին խորությունը փոքր էր՝ միջինը 35–45 սմ, իսկ կափարիչները հանգուցյալի մարմնից բարձր էին 10–15 սմ: Քարե դագաղները պատրաստվել են մեծ մա-

16 Токарский 1964, 39.

17 Պետրոսյան և այլք 2008, 190:

18 Ժամկոչյան 1986, 220–225:

19 1990 թ. Կուրթան գյուղում հայտնաբերվել է վաղմիջնադարյան միանավ եկեղեցի, որի մոտ գտնվել է նաև սարկոֆագ, մեջը չորս թաղումով [Ամսեյան 1991, 108–109]: Ընդգծենք, որ այն մեր այցելության ժամանակ չկար, իսկ Կուրթանի թանգարանի բակում գտնվող սարկոֆագի մասին որևէ տվյալ չկարողացանք իմանալ և հնարավոր չեղավ նույնականացնել եկեղեցու մոտ հայտնաբերվածի հետ:

20 Սահինյան 1955, 55:

21 Թորամանյան 1948, 55–56:

22 Սադոյան 1985, 172:

23 Միրիջանյան 2014, 276–277:

24 Միրիջանյան 2019, 121–128:

սամբ կարմիր կամ սև տուֆից, հազվադեպ՝ բազալտից, իսկ Արցախում՝ կրաքարից:

Ընդգծենք, որ քարե տապանները դրվել են ինչպես հողի մեջ, այնպես և դամբարանասրահներում: Վերջինիս օրինակներից է Ջրվեժի՝ վերը նշված սարկոֆագը: Ցավոք, հայտնի չէ, թե ում համար է եղել նման մեծ սարկոֆագը: Իսկ ահա Արևմտյան Շիրակի Նախճավան բնակավայրում գտնվող երկսրահ դամբարանում հայտնի է, որ տեղադրված է եղել Արտավազդ Կամսարականի սարկոֆագը: Այդ մասին փաստում է երկթեք տապանաքարի վրա արված արձանագրությունը[25]: Ելնելով վիմագրի բովանդակությունից, վիմագրագետ Ա. Մանուչարյանը դամբարանի կառուցման հավանական ժամանակը համարում է 7-րդ դ. 50–60-ական թվականները[26]:

Զարգացած միջնադարի քարե տապանները

Առավել ուշագրավ է սարկոֆագների կիրառումը զարգացած միջնադարում, որի մասին տվյալներ՝ մինչև վերջերս չկային: Կարծիք կար, որ սարկոֆագները տարածված են եղել վաղ միջնադարում, որից հետո չեն կիրառվել: Սակայն Սիսիան քաղաքի Ն. Ադոնցի անվան պատմության թանգարանի բացօդյա Քարեդարանում ցուցադրված բազալտե սարկոֆագը փաստում է հակառակը: Սարկոֆագը թանգարան է բերվել Սյունիքի մարզի Շաքի գյուղից, 1985 թ.: Եզրային հատվածում այն ունի աստիճանաձև մշակում, որպեսզի կափարիչը հերմետիկ փակվի [նկ. 9]: Առավել ուշագրավ է, որ սարկոֆագն ունի եռատող արձանագրություն, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն հողում չի թաղվել, այլ դրվել է դամբանասրահում:

Հիմք ընդունելով տառաձևերի հնագրական առանձնահատկությունները՝ տապանագիրը թվագրվում է 11–12-րդ դդ.: Արձանագրության վիմագրական քննությունից պարզվել է, որ սարկոֆագում թաղվել է Սյունյաց Գրիգոր Բ արքան, որը մահացել է 1166 թ. և հավանաբար թաղվել Շաքիի վանական համալիրում[27]: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ զարգացած միջնադարում ևս շարունակվել է քարե դագաղների կիրառությունը՝ հատկապես բարձրաշխարհիկ անձանց պարագայում: Միաժամանակ կարող ենք փաստել, որ զարգացած միջնադարում կառուցվող հատուկ իշխանական թաղումների համար նախատեսված տապանատներում դրվել են ոչ միայն հարթ սալատապաններ (Նորավանք[28], Սանահին[29]), այլև սարկոֆագներ:

Ուշ միջնադարի քարե տապանները

Այս շրջանի տապանների մասին տեղեկությունները ևս լրացվեցին վեր-

---

25 Орбели 1963, 409–413; Մնացականյան 1982, 103–105:

26 Մանուչարյան 1977, 104:

27 Հարությունյան 2018, 142–148:

28 Մաթևոսյան 2017, 18–23. Սմբատի տապանատան մուտքից վերև վայելչագիր արձանագրությունը վկայում է. «ԵՍ՝ ՏԱՐՍԱՀՃ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ՇԻՆԵՑԻ ՁԴԱՄԲԱՐԱՆՍ ՅԱՂԱԳՍ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ ՍՄՊԱՏ ԱՐՔԱՒՆ...»:

29 Բարխուդարյան և այլք 2012, 107–110:

ջին տարիներին: Մասնավորապես 2019 թ. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան մոտակայքում, շինարարական աշխատանքների ժամանակ, բացվել է սարկոֆագային թաղում տապանաքարով: Ծածկասալի արձանագրության ուսումնասիրությամբ պարզվեց, որ հանգուցյալը Հովհաննավանքի երբեմնի առաջնորդ, նշանավոր հոգևոր գործիչ Զաքարիա Վաղարշապատցին է, ով վախճանվել է 1659 թ.[30]: Սարկոֆագը դրսից և ներսից լավ մշակված ուղղանկյունաձև տապան է՝ պատրաստված դարչնագույն տուֆից (1,91 × 0,84 × 0,45): Այսպիսով, վերջին շրջանի նորահայտումները փաստում են, որ քարե տապաններում թաղումներ կատարվել են առնվազն մինչև 17-րդ դ. և ուշ միջնադարում ևս կիրառվել են:

Քարե տապանների երկրորդային կիրառությունը

Նախաքրիստոնեական շրջանի որոշ սարկոֆագներ կամ դրանց ծածկասալերն ունեն անցքեր, որոնք, ըստ ուսումնասիրողների, կապ ունեն հոգու մասին ժողովրդական հավատալիքների հետ[31]: Քրիստոնեական շրջանի սարկոֆագների վրա անցքերն արվել են հետագայում՝ երկրորդային կիրառման նպատակով: Առավել հաճախ դրանք օգտագործվել են որպես ջրի գուռ՝ անասուններին ջրելու համար: Ինչպես փաստում է Թ. Թորամանյանը, Գուսանագյուղում շուրջ հինգ տասնյակի հասնող լավ պահպանված սարկոֆագներ գյուղացիները տարել են ամառային արոտավայր՝ անասուններին ջուր տալու համար[32]: Սիսիանի սարկոֆագը ևս հատակին անցք ունի և ենթադրաբար երկրորդային օգտագործմամբ ծառայել է որպես գուռ:

Սարկոֆագներն օգտագործել են նաև որպես ցորենի կամ ալյուրի շտեմարան, որի մասին վկայում է Ե. Լալայանը[33]: Այսպիսով, սարկոֆագները, լինելով լավ մշակված քարե կառուցվածքներ, հետագայում ևս օգտագործվել են՝ ծառայելով որպես ջրի գուռ, այնպես էլ իբրև ցորենի և ալյուրի պահեստարան:

Սարկոֆագը որպես մասունքարան

Ուշագրավ է, որ քարե տապաններում ամփոփվել են նաև սրբերի մասունքներ, ինչի մասին վկայում է Զենոբ Գլակը[34]: Պատմիչների տեղեկությունները հաստատվում են նաև փաստացի տվյալներով: Այսպես, Կոտայքի մարզում է գտնվում Կարենիսի նշանավոր վանական համալիրը, որից այժմ պահպանվել են եկեղեցին և ավելի ուշ արևմուտքից կցված գավիթը: Ըստ ավանդության՝ եկեղեցին կառուցվել է ի հիշատակ Մատթեոս և Անդրեաս առաքյալների, քանզի այստեղ են պահվել նրանց մասունքները[35]: 18-րդ դ. կեսերին

30 Հարությունյան, Բաղիշյան 2020, 44–57:

31 Մարտիրոսյան, Թորոսյան 1986, 221–222:

32 Թորամանյան 1942, 26–27:

33 Լալայեան 1898, 191:

34 Մամիկոնյան 1989, 48–49:

35 Շահխաթունեանց 1842, 206:

համալիրն արդեն անվանում էին Ս. Առաքելոց վանք՝ առանց ընդգծելու առաքյալների անունները[36]:

Կարենիսի եկեղեցին առանձնահատուկ է աղոթասրահի տակ գտնվող ստորգետնյա դամբարանի շնորհիվ: Սա թաղակապ, արևելքում կիսաշրջանաձև ավարտվող փոքր շինություն է՝ կառուցված բազալտե փոքր աղյուսանման քարերով: Դամբարանի աստիճանները տանում են դեպի մուտքը, որն արևմտյան կողմում է: Կառույցի փոքր չափերից ելնելով՝ Մ. Հասրաթյանը նկատել է, որ այն նախատեսված է եղել ոչ թե թաղման, այլ մասունքներ պահելու համար[37]:

Առավել ուշագրավ է դամբարանի արևելյան հատվածում առկա խորշը, որի մեջ ամփոփված է երկմասանի սև տուֆե սարկոֆագը [նկ. 10, 11]: Այն իր կառուցվածքով եզակի է Հայաստանի տարբեր շրջաններից մինչ օրս հայտնի գերեզմանային կառույցների շարքում: Սարկոֆագը երկայնական միջնորմով բաժանված է երկու մասի՝ ենթադրաբար նախատեսված երկու անձի համար: Ելնելով սարկոֆագի երկարության (120 սմ) և առանձին խցերի լայնության (24 սմ և 25 սմ) համամասնություններից՝ Ա. Ղազարյանը իրավացիորեն ենթադրել է, որ սարկոֆագում ամփոփվել են ոչ թե հանգուցյալների մարմինները, այլ առաքյալների մասունքները[38]: 18-րդ դ. սկզբներին առաքյալների մասունքները կամ դրանց մի մասը[39] հայտնվում են Էջմիածնում և ամփոփվում արծաթե մասնատուփի մեջ[40]:

Վերջին շրջանում Կարենիսի գյուղացիների նախաձեռնությամբ իրականացված մաքրման աշխատանքների արդյունքում բացվել է նաև սարկոֆագի հարթ ծածկասալը[41]:

Նմանօրինակ նեղ սալարկղային թաղում բացվել է նաև Ձրվեժի եկեղեցու պեղումների ժամանակ: Սալարկղի լայնությունը՝ 26 սմ և տապանաքարի արձանագրությունը ([Ս.] ՊԱ. ՀԱՐԱՆ ԹԱԹԼՈՅԷ) հիմք են տվել պեղող ճարտարապետ Ն. Տոկարսկուն եզրակացնելու, որ այստեղ ամփոփվել են ոմն Թաթուլի մասունքները[42]:

Այսպիսով, թեև երկու առաքյալները քարոզել են Հայաստանի սահմաններից դուրս, այնուհանդերձ բուն Հայաստանում նրանց պաշտամունքը եղել է բավական տարածված: Նրանց մասունքներն ամփոփվել են միասին՝ ինչպես սարկոֆագում, այնպես էլ մասնատուփում:

---

36 Սիմեոն Երևանցի 2003, 395:

37 Հասրաթյան 1975, 50:

38 Казарян 2000, 101–102.

39 Մեսրոպ Սմբատյանցը հիշատակում է, որ 1895 թ. խորանի տակից դարձյալ մասունքներ են գտնվել, որոնք Բջնիի տեսուչ Միքայել վարդապետը ներկայացրել է կաթողիկոսին [Սմբատյանց 1895, 307]:

40 Էջմիածնի գանձեր 1984:

41 Միրիջանյան 2017, 184–188:

42 Токарский 1959, 45–46.

Եզրակացություն

Քարե տապանները (սարկոֆագ) թաղումների համար կիրառվել են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից: Վաղ միջնադարում դրանք լայնորեն գործածվում են թաղման այլ կառույցների հետ միաժամանակ՝ ներկայանալով մի քանի տեսակներով: Սարկոֆագները դրվել են ինչպես հողի մեջ, այնպես էլ դամբարանասրահներում: Վերջիններս պատկանել են հասարակության մեջ բարձր դիրք ունեցող անձանց, ինչպես փաստում է Արտավազդ Կամսարականի սարկոֆագի արձանագրությունը: Վաղ միջնադարում քարե տապաններում ամփոփվել են նաև սրբերի մասունքներ, ինչի մասին վկայում են պատմիչները և փաստում գտածոները (Կարենիս): Հետագա դարերում ևս քարե տապանները կիրառվել են, դրանց մասին փաստական տվյալները վերջին տարիներին ավելանում են (Սիսիան, Էջմիածին): Այսպիսով, միջնադարյան քարե տապանների ուսումնասիրությունը նոր բացահայտումներով լրացնում է պատմիչների տեղեկությունները փաստական նյութով, միաժամանակ ամբողջացնում մեր պատկերացումները դրանց տեսակների, կիրառության, թվագրության մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ և այլք 2012
Բարխուդարյան Ս.Գ., Ղաֆադարյան Կ.Գ., Սաղումյան Ս.Տ., Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, Երևան, «Գիտություն», 2012:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 1989
Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Վ. Վարդանյանի, Երևան, «Խորհրդային գրող», 1989:

ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ 1842
Շահխաթունեանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, Էջմիածին, Ս. Էջմիածնի տպ., 1842:

ՍՄԲԱՏՅԱՆՑ 1895
Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ., 1895:

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ 2003
Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ.Գ. Համբարձումյանի, Երևան, «Մուղնի», 2003:

Ուսումնասիրություններ

ԱՄՍԵՅԱՆ 1991
Ամսեյան Ա., Կուրթան գյուղի նորահայտ եկեղեցին // ՀՀ-ում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ, Երևան, 1991:

ԵԳԱՆՅԱՆ 2010
Եգանյան Լ.Բ., Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ, Երևան-Գյումրի, «Գիտություն», 2010:

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐ 1984
Էջմիածնի գանձեր (ալբոմ), Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ., 1984:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1942
Թորամանյան Թ. Հ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, Արմֆան, 1942:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1948
Թորամանյան Թ. Հ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1948:

ԺԱՄԿՈՉՅԱՆ 1986
Ժամկոչյան Ա. Ս., Ջրվեժի վաղմիջնադարյան դամբարանադաշտի պեղումները // Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 1, 220–225:

ԼԱԼԱՅԵԱՆ 1898
Լալայեան Ե. Ա., Սիսիան, Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Նշանավոր վանքեր // Ազգագրական հանդէս, Թիֆլիս, 1898, Գ, 186–193:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 1966
Խաչատրյան Ժ. Դ., Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում // Լրաբեր հասարակական գիտությունների, 1966, №1, էջ 83–93:

ԿԱՐԱԽԱՆՅԱՆ 1992
Կարախանյան Գ. Հ., Սարգսյան Գ. Գ., Մելքոնյան Հ. Ա., Հարությունյան Պ. Պ., Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ// Բանբեր Երևանի համալսարանի, 1992, №2, 158–163:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1875
Հասրաթյան Մ. Մ., Ամարասի ճարտարապետական համալիրը // Լրաբեր հասարակական գիտությունների, 1975, №5, 35–52:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2018
Հարությունյան Ա. Է., Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը // Բանբեր Հայագիտության, 2018, №1, 137–149:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԲԱԴԻՇՅԱՆ 2020
Հարությունյան Ա. Է., Բադիշյան Ա. Գ., Ջաքարիա վարդապետ Վաղարշապատցին և նրա նորահայտ դամբարանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում // Էջմիածին, 2020, №1, 44–57:

ՄԱԹԵՈՍՅԱՆ 2017
Մաթևոսյան Կ. Ա., Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, «Մուղնի», 2017:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 1977
Մանուչարյան Ա. Ա., Քնություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ԹՈՐՈՍՅԱՆ 1986
Մարտիրոսյան Հ. Ա., Թորոսյան Ռ. Մ., Արգիշթիխինիլիի սարկոֆագը // Պատմա-բանասիրական հանդես, 1986, №3, 221–227:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ 2014
Միրիջանյան Դ. Հ., Հայաստանի վաղմիջնադարյան գերեզմանային կառույցների դասակարգման փորձ // Հաբիտուս I, Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն, Երևան, «Գիտություն», 2014, 272–291:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ 2017
Միրիջանյան Դ. Հ., Կարենիսի վանքի Անդրեաս և Մատթեոս առաքյալների սարկոֆագ-մասունքարանը // Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը-Բ, Երևան, «Գիտություն», 2017, 182–186:

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ 2019
Միրիջանյան Դ. Հ., Դիտարկումներ Հայաստանի վաղմիջնադարյան տապանաքարերի շուրջ // Հայագիտության հարցեր, 2019, № 1 (16), 121–129:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1982
Մնացականյան Ս. Ս., Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:

ՊԵՏՐՈՍՅԱՆ և այլք 2008
Պետրոսյան Հ. Լ., Խաչատրյան Ժ.Դ, Փիլիպոսյան Ա. Ս., Հակոբյան Հ. Պ., Սաֆարյան Վ., Կիրակոսյան Լ. Վ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները // Հին Հայաստանի մշակույթը, Հանրապետական գիտական նստաշրջան XIV (խմբ. Պ. Ավետիսյան), Երևան, «Գիտություն», 2008, 187–199:

ՍԱԴՈՅԱՆ 1985
Սադոյան Բ. Լ., Արուճի վաղմիջնադարյան հուշարձանները // Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 4, 219–226:

ՍԱՀԻՆՅԱՆ 1955
Սահինյան Ա. Ա., Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955:

ՍԻՄՈՆՅԱՆ և այլք 2017–2018
Սիմոնյան Հ. Ե., Սաֆարյան Մ. Գ., Սիմոնյան Տ. Հ., Քալանթարյան Ն. Ա., Աթոյանց Ե. Լ., Աղձքի արքայական դամբարանի պեղումների 2015–1017 թթ. արդյունքները // Հուշարձան տարեգիրք, ԺԲ-ԺԳ, «Հուշարձան», 2017–2018, 5–52:

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ 2020
Տոնապետյան Պ. Ա., Երերույք. Քրիստոնեական Հայաստանի նշանավոր հնավայր, Երևան, Սարգիս Խաչենց, «Փրինթինֆո», 2020:

ЕСАЯН и др. 1991
Есаян С. А., Биягов Л. Н., Амаякян С. Г., Канецян А. Г., Биайнская гробница в Ереване, Археологические памятники Армении 15, Урартские памятники, II, Ереван, изд. АН Армении, 1991.

КАЗАРЯН 2000
Казарян А. Ю., Реликвии в архитектуре средневековой Армении, Восточнохристианские реликвии, Москва, «Прогресс-Традиция», 2000, 93–120.

ОРБЕЛИ 1964
Орбели И. А., Надгробие Артавазда Камсаракана, Избранные труды, Ереван, изд. АН Армянской ССР, 1963.

ТОКАРСКИЙ 1959
Токарский Н. М., Джрвеж I, результаты работ джрвежской археологической экспедиции 1957 г., Археологические раскопки Армении, № 8, Ереван, изд. АН Арм ССР, 1959.

ТОКАРСКИЙ 1964
Токарский Н. М., Джрвеж II, Вохджаберд, результаты работ джрвежской археологической экспедиции 1958–1962гг., Археологические раскопки Армении, № 11, Ереван, изд. АН Арм ССР, 1964.

ХАЧАТРЯН 1976
Хачатрян Ж. Д., Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956–1972 гг.), Археологические раскопки в Армении 15, Ереван, изд. АН Арм ССР, 1976.

KALANTARYAN et al. 2015
Kalantaryan A. A., Sargsyan G. G., Yengibaryan N. G., Melikyan V., Results of Excavations in Gogaran, 2007–2008 // Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2015, № 1, 41–57:

TIRATSYAN 2014
Tiratsyan N. G., Two Pithos Burials from Argistihinili // Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2013- 2014, № 1–2, 143–158.

Dianna H. Mirijanyan
Institute of Archaeology and Ethnography

ARMENIAN MEDIEVAL SARCOPHAGI

Keywords: burial structures, sarcophagi, AD, typology, chronology, lithography, relics.

Armenian medieval burial structures are divided into several types, among which stone sarcophagi have special significance. They are widespread especially in the Early Middle Ages, and in the subsequent centuries they are very rare.

In the historical sources there are numerous evidences about burying sacred relics in sarcophagi. Numerous sarcophagi were discovered during archaeological excavations, but these have never been discussed in scientific literature in detail. By volume all sarcophagi are almost the same, but the detailed structural explorations allow us to divide them into several types.

The present article is an attempt to systemize all the sarcophagi found during the excavations of different years, to present them according to typology and chronology. The sarcophagi are found both in the soil and inside the tomb structures, the best examples of which are the sarcophagus of Artavazd Kamsarakan with its two-sided tombstone, the irregular rectangular sarcophagus of the Jrvezh mausoleum, and the two-part sarcophagus of Karenis.

Дианна Грачьевна Мириджанян
Институт археологии и этнографии

АРМЯНСКИЕ СРЕДНЕВЕКОВЫЕ САРКОФАГИ

Ключевые слова: погребальные сооружения, саркофаги, н.э., типология, хронология, литография, реликвии.

Средневековые армянские погребальные сооружения делятся на несколько типов, среди которых особое значение имеют каменные саркофаги. Они получают широкое распространение особенно в раннем средневековье, в последующие же века они довольно редки.

В исторических источниках имеются многочисленные свидетельства о захоронении священных реликвий в саркофагах. Во время археологических раскопок были обнаружены многочисленные саркофаги, которые в деталях никогда не обсуждались в научной литературе. По объему все саркофаги практически одинаковы, но детальные структурные исследования позволяют разделить их на несколько типов.

Данная статья является попыткой систематизировать все саркофаги, обнаруженные при раскопках разных лет, представить их в соответствии с типологией и хронологией. Саркофаги были найдены как в земле, так и внутри усыпальниц. Их лучшими примерами являются саркофаг Артавазда Камсаракана с двухсторонним надгробным камнем, неравномерный прямоугольный саркофаг из усыпальницы Джрвежа и двухчастный саркофаг Карениса.

Ներկայացվել է՝ 03.08.2022,
գրախոսվել է՝ 06.09.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

Նկ. 1. Լմբապավանք եկեղեցու հյուսիսարևելյան հատվածում գտնվող քարե տապանները



Նկ. 2. Աղցքի եկեղեցու հարևանությամբ գտնվող քարե տապանը



Նկ. 3. Ջրվեժից հայտնաբերված քարե տապանը

Նկ. 4. Վանաձորից հայտնի քարե տապանը



Նկ. 5. Գեղարգել եկեղեցու շրջակայքից հայտնաբերված քարե տապանը

Նկ. 6. Կորթան գյուղի թանգարանի բակի քարե տապանը

Նկ. 7. Ապարանի բազիլիկայի շրջակայքում գտնվող քարե տապանը

Նկ. 8. Ս. Հռիփսիմե եկեղեցու արևելյան հատվածում գտնվող քարե տապանը



Նկ. 9. Միսիան քաղաքի պատմության թանգարանի բացօթյա Քարեդարանում ցուցադրված բազալտե տապանը



Նկ. 10-11. Կարենիսի դամբարանում ամփոփված երկմասանի տապանը (չափագրությունները՝ Սոսե Աղայանի)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5